



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 3

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2016 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Տեղեկատվություն ինստիտուցիոնալ և ծրագրային միջազգայնացման թեմաներով վերապատրաստական գործընթացի մասին (հրավիրվում է նաև աշխատակազմը):
2. Ավետիս Ահարոնյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների ընթացքը ֆակուլտետում:
3. Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
4. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 25 անդամներից այս պահին նիստին մասնակցում է 20-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը:

1-ին հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց ԵՊՀ-ի «Գրանդների ծրագրերի» ղեկավարի տեղակալ Մարիամ Եղյանին: Վերջինս ինստիտուցիոնալ և ծրագրային միջազգայնացման թեմաներով վերապատրաստական գործընթացի մասին ներկայացրեց բավական ընդարձակ տեղեկատվություն-դասախոսություն, որը պարբերաբար ընդմիջվում

էր ուշագրավ սլայդների ցուցադրմամբ: Այդ ընթացքում նա շատ հստակ ու ամփոփ պատասխանում էր գիտխորհրդի անդամների՝ ինստիտուցիոնալ և ծրագրային միջազգայնացման թեմաներով վերապատրաստական գործընթացին վերաբերող ամենատարբեր հարցերին՝ փաստելով, որ հումանիտար գիտությունների մասնագետները ևս կարող են դուրս գալ միջազգային ասպարեզ, և արդեն կան հաջողված 2 փորձեր լեզվաբանության գծով (Գարիկ Մկրտչյան և Խաչատուր Հարությունյան):

Մարիամ Եղյանի դասախոսություն-տեղեկատվությունն ուսանելի էր և ունկնդրվեց մեծ հաճույքով:

Օրակարգի 2-րդ հարցը նվիրված էր ֆակուլտետում Ավետիս Ահարոնյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների ընթացքին: Ինչպես հավաստեցին ելույթ ունեցող ամբիոնի վարիչները, այդ հարցը մշտապես գտնվում է իրենց ուշադրության կենտրոնում, ջանադիր պատրաստվում են զանազան զեկուցումներ, որոնք շուտով կքննարկվեն ամբիոններում:

Օրակարգի 3-րդ հարցում լսվեց գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի տարեկան հաշվետվությունը: Այդ առիթով ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ դոց. Ա. Ջրբաշյանը:

Նա մասնավորապես նկատեց, որ 2015-2016 թթ. հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում թարմացվել և արդիականացվել են մագիստրոսական դասընթացների ծրագրերը՝ հարմարեցնելով ժամանակակից գրականագիտության պահանջներին: Ամբիոնի դասախոսները վերջին տարվա ընթացքում տպագրել են գիտական շուրջ տասնհինգ հոդված: Լույս են տեսել Ժ. Քալանթարյանի «Դիտանկյուն», Ա. Բեքմեզյանի «Տողամիջյան ընթերցումներ» հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուները, որոնք ամփոփում են հեղինակների տարբեր տարիների գիտական աշխատանքները: Թարգմանվել և լույս է տեսել Մ. Ջանփոլադյանի «Մասունցի Դավթի ռուսական կյանքը» մենագրությունը:

Հոկտեմբեր ամսվա սկզբին տպագրվեց ամբիոնի դասախոսների շուրջ հինգ տարվա գիտական աշխատանքի արդյունքը՝ «Գրականության տեսության արդի խնդիրներ» ուսումնական ձեռնարկը՝ նախատեսված մագիստրոսական բաժնի ուսանողների, գրականագետների, գրականությամբ հետաքրքրվող լայն շրջանակների համար:

Թարգմանվում է ժամանակակից ռուս գրականագետ Օլգա Տուրիշևայի «Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը» աշխատությունը, որը շուտով կհանձնվի տպագրության:

Ամբիոնի անդամները շարունակաբար հանդես են գալիս հանրապետական և ֆակուլտետային գիտաժողովներում: Պրոֆ. Մ. Ջանփոլադյանը մասնակցել է «Բրյուսովյան ընթերցումներ» գիտաժողովին «Բրյուսովի քննադատական գնահատականները հայ պոեզիայի վերաբերյալ. մեկ դար անց» զեկուցմամբ, նաև հեռակա մասնակցություն է ունեցել Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի միջազգային գիտաժողովին «Սերգեյ Եսենինը Լևոն Մկրտչյանի հրապարակումներում» թեմայով:

Ամբիոնի դասախոսների աշխատանքը չի սահմանափակվում միայն դասերով ու գիտական գործունեությամբ: Պրոֆ. Ժ. Քալանթարյանը ՀՀ ԲՈՀ-ի՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում գործող գրականագիտության խորհրդի նախագահն է, Մ. Ջանփոլադյանը և Ա. Ջրբաշյանը՝ նույն խորհրդի անդամները: Ամբիոնի անդամները ասպիրանտներ և հայցորդներ են ղեկավարում ոչ միայն համալսարանում, այլև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Ամբիոնն ունի չորս ասպիրանտ (երկուսը՝ առկա, երկուսը՝ հեռակա), որոնք ներգրավված են ամբիոնական աշխատանքներում: Ամբիոնի աշխատանքի արդյունքներն արտացոլված են սոցիալական տարեկան բարձր արդյունքներում: Անկախության 25-ամյակի առիթով պրոֆ. Ժ. Քալանթարյանը ստացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Ընթացիկ հարցեր՝

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Մանուկ Հարությունի Ֆալակյանին դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու համար միջնորդություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ ասիստենտ Մանուկ Ֆալակյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 1986 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «1950-

60-ական թվականների ռուս-հայերեն բառարանագրությունը և հայերենի բառապաշարի հարստացումը» թեմայով: Տպագրել է ուսումնամեթոդական աշխատանք՝ «Ավանդական ուղղագրություն. սկզբունքներ, վարժություններ, թելադրության նյութեր», հրատարակել է գիտական 9 հոդված: 1985 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ:

«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիալական արդյունքը 4.45 միավոր է:

Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Մանուկ Ֆալակյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Մանուկ Ֆալակյանին թույլատրել մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

բ/ **ԼՍԵՑԻՆ** – Պրոֆ. Աշոտ Սուքիասյանի «Ժամանակակից հայոց լեզու» լրամշակված դասագիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Լ. Հովսեփյանը և դոց. Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Աշոտ Սուքիասյանի «Ժամանակակից հայոց լեզու» դասագրքի կազմումից և 1-ին հրատարակությունից հետո անցել է մոտ երեք ու կես տասնամյակ (գիրքը այդ ընթացքում ունեցել է 4 վերահրատարակություն՝ փաստորեն առանց փոփոխությունների): Դասագիրքը այժմ էլ գործածական է լեզվական ֆակուլտետներում: Սակայն այդ տասնամյակների ընթացքում որոշ չափով հնացել է գրքի փաստական նյութը, ժամանակակից լեզվի շատ հարցեր այսօր ունեն նորովի մեկնաբանում:

Հասունացել է դասագրքի վերամշակման և լրացման պահանջը: Այդ գործը ձեռնարկել են հայոց լեզվի ամբիոնի դասախոսներ Քնարիկ Սուքիասյանը և Մանուկ Ֆելեքյանը: Դասագրքում կատարված բազմաթիվ ճշգրտումներից և խմբագրումներից բացի՝ նորովի կամ նորից են շարադրված ուղղախոսության, գրաբանության բաժինները, «Իմաստաբանություն» գլխի համանուններ և հականիշներ ենթազույգները, «Բառակազմություն» բաժնի

ներածական մասը և ածանցմանը նվիրված հատվածը, «Բառարանագիտություն և բառարանագրություն» գլուխը (բացի մի քանի բառարանների նկարագրության հատվածից):

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ Աշոտ Սուքիասյանի, Քնարիկ Սուքիասյանի, Մանուկ Ֆելեքյանի «Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն)» լրամշակված դասագիրքը երաշխավորել տպագրության:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին և նիստը հայտարարեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ